ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3
№ ԲՄԾՁԲ-7/2-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 14 -ը ապրիլի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և "Դահոս" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ. Դալլաքյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 18.04.2018թ. կնքված № ԲՄԾՁԲ-7/2-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հանրային սննդի կազմակերպման սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի առավելագույն գինը կազմում է 2 044 700 (երկու միլիոն քառասունչորս հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ (Հավելված N 2):

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կատարողի կողմից ծառայությունների մատուցման դիմաց վճարումն իրականացվում է այդ համաձայնագիրը, ինչպես նաև պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 4 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 3 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ք. Երևան, Բագրևանդի 5<br>ՀՀ ֆինանսների նախարարության<br>աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011144079<br>ՀՎՀՀ 02522157<br>ՀՀ պաշտպանության նախարարության<br>ՆՏԱ դեպարտամենտի պետ | "Դահոս" ՍՊԸ<br>ք. Երևան, Քանաքեռ 16փ., 5/1 տուն<br>«Ինեկոբանկ» ՓԲԸ<br>Հ/հ 2052220571310001<br>ՀՎՀՀ 00884034<br>տնօրեն |
| Ն. ՅՈԼՅԱՆ | Հ. ԴԱԼԼԱՔՅԱՆ |

Հավելված N 1
№ ԲՄԾՁԲ-7/2-2 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Մատուցվող ծառայության անվանումը | Չ/Մ | Միավորի գինը ըստ հեռավորության /ՀՀ դրամ/ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Մինչև 50 կմ | 50-100 կմ | 100-200 կմ | 200-300 կմ | 300-350 կմ | 350 կմ-ից ավելի |
| Հանրային սննդի կազմակերպման սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ /ԶՈՒ զորամասեր/, այդ թվում | | | | | | | | |
| 1. ԶՈՒ զորամասեր՝ Գույքի վերանորոգում | | | | | | | | |
| 1.1 Բանջարեղենի կոնտեյների վերանորոգում | | | | | | | | |
| 1 | 1 գծամետր մետաղական կարկասի ուղղում | գ/մ | 180 | 189 | 199 | 209 | 219 | 1 140 |
| 2 | 1 գծամետր մետաղական կարկասի փոխարինում նորով | գ/մ | 200 | 210 | 221 | 233 | 245 | 1 266 |
| 3 | 1 գծամետր փայտե մասերի փոխարինում նորով | գ/մ | 300 | 315 | 331 | 348 | 365 | 1 897 |
| 4 | 1 գծամետր մետաղական կարկասի ներկում | գ/մ | 180 | 189 | 199 | 209 | 219 | 1 140 |
| 1.2 Հենակետում սննդի պահպանման արկղի վերանորոգում | | | | | | | | |
| 1 | Փականի վերանորոգում | հատ | 690 | 725 | 762 | 801 | 841 | 4 358 |
| 2 | Փականի փոխարինում նորով | հատ | 1380 | 1 449 | 1 522 | 1 599 | 1 679 | 8 713 |
| 3 | Ծխնու վերանորոգում | հատ | 690 | 725 | 762 | 801 | 841 | 4 358 |
| 4 | Ծխնու փոխարինում նորով | հատ | 1380 | 1 449 | 1 522 | 1 599 | 1 679 | 8 713 |
| 5 | Դռան փոխարինում նորով | հատ | 6890 | 7 235 | 7 597 | 7 977 | 8 376 | 23 557 |
| 6 | Դռան հերմետիկի փոխարինում նորով | հատ | 1150 | 1 208 | 1 269 | 1 333 | 1 400 | 7 258 |
| 7 | Պատերի հարթեցում 1մ2 | մ2 | 1150 | 1 208 | 1 269 | 1 333 | 1 400 | 7 258 |
| | Ընդամենը՝առավելագույն գումարը | 1 185 000 (մեկ միլիոն մեկ հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ | | | | | | |

Մատուցվելիք ծառայությունների հեռավորությունները հաշվարկված է ք.Երևանից:

Վերանորոգման աշխատանքներն իրականացվում են ըստ ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության հանձնարարականների՝ սահմանված ծավալներով և ժամկետներում:
Վերանորոգման աշխատանքները պետք իրականացվեն զորամասերում, միայն խիստ անհրաժեշտության դեպքում նախապես ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության գրավոր թույլտվություն ստանալուց հետո տեղափոխել կազմակերպության արհեստանոց:

Բոլոր փոխարինվող պահեստամասերը, նյութերը և նյութական միջոցները չպետք է լինեն նախկինում օգտագործված:
Կատարված վերանորոգման աշխատանքների երաշխիքային ժամկետ է սահմանվում 1 տարի:

| Հ/Հ | Մատուցվող ծառայության անվանումը | Չ/Մ | Միավորի գինը ըստ հեռավորության /ՀՀ դրամ/ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Մինչև 50 կմ | 50-100 կմ | 100-200 կմ | 200-300 կմ | 300-350 կմ | 350 կմ-ից ավելի |
| 2. ԶՈՒ զորամասեր՝Հենակետի 200-ից 300լ. տարողության չժանգոտվող պողպատից խմելու ջրի բաքի վերանորոգում | | | | | | | | |
| 1 | 3/4 դյույմանոց նիկելապատ ջրի ծորակի փոխարինումը նորով | գ/մ | 600 | 630 | 662 | 696 | 731 | 3 793 |
| 2 | 3/4 դյույմանոց ջրի ծորակից դեպի ջրի բաք տանող խողովակի ամրացում, եռակցում | գ/մ | 1200 | 1 260 | 1 323 | 1 390 | 1 460 | 3 583 |
| 3 | Ջրի բաքի կոտրված, դեֆորմացված ոտքերի ամրացում, եռակցում | գ/մ | 3800 | 3 990 | 4 190 | 4 400 | 4 620 | 12 000 |
| 4 | Ջրի բաքի կոտրված, դեֆորմացված կափարիչի ամրացում, ծխնիների եռակցում | գ/մ | 1600 | 1 680 | 1 764 | 1 853 | 1 946 | 10 110 |
| 5 | Ջրի բաքի կափարիչի տեղադրում | հատ | 900 | 945 | 993 | 1 043 | 1 095 | 5 688 |
| 6 | Ջրի բաքի դեֆորմացված մակերեսի ուղղում | հատ | 600 | 630 | 662 | 696 | 731 | 3 793 |
| 7 | Ջրի բաքի կափարիչի ռետինե հերմետիկի ամրացում | հատ | 500 | 525 | 552 | 580 | 609 | 3 161 |
| | Ընդամենը՝առավելագույն գումարը | 859 700 (ութ հարյուր հիսունինը հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ | | | | | | |

Մատուցվելիք ծառայությունների հեռավորությունները հաշվարկված է ք.Երևանից:

Վերանորոգման աշխատանքներն իրականացվում են ըստ ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության հանձնարարականների՝ սահմանված ծավալներով և ժամկետներում:
Վերանորոգման աշխատանքները պետք իրականացվեն զորամասերում, միայն խիստ անհրաժեշտության դեպքում նախապես ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության գրավոր թույլտվություն ստանալուց հետո տեղափոխել կազմակերպության արհեստանոց:
Բոլոր փոխարինվող պահեստամասերը, նյութերը և նյութական միջոցները չպետք է լինեն նախկինում օգտագործված:
Կատարված վերանորոգման աշխատանքների երաշխիքային ժամկետ է սահմանվում 1 տարի:

Ծառայությունների մատուցումը կիրականացվի 2020թ. 2-րդ և 3-րդ եռամսյակներում:

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Դահոս» ՍՊԸ տնօրեն |
| ՀՀ պաշտպանության նախարարության | |
| ՆՏԱ դեպարտամենտի պետ | |
| Ն. ՅՈՒԼՉՅԱՆ | Հ. ԴԱԼԼԱՔՅԱՆ |

Հավելված N 2

№ ԲՄԾՁԲ-7/2-2 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

| Հ/հ | Գնման առարկան | *Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | CPV-ի կոդը | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| | Հանրային սննդի կազմակերպման սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ, այդ թվում՝ | | | | | | | | | | |
| 1 | Գույքի վերանորոգում | 50881300/25 | 500000 | 500000 | 500000 | 1185000 | 1185000 | 1185000 | 1185000 | 1185000 | 1185000 |
| 2 | Հենակետի 200-ից 300լ. տարողության չժանգոտվող պողպատից խմելու ջրի բաքի վերանորոգում | 50881300/26 | 500000 | 500000 | 500000 | 859700 | 859700 | 859700 | 859700 | 859700 | 859700 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՑՈԼՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Դահոս» ՍՊԸ տնօրեն

Հ. ԴԱԼԼԱՔՅԱՆ